

**ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ (1992-2008թթ.)**

**ՄԱՐՏԻՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**Բանալի բառեր** - գերմանահայ համայնք, «Գյոթե ինստիտուտ», Բունդեսթագ, պառլամենտական կրթաթոշակ, Հայաստանի մշակույթի օրեր, Գերմանիայի մշակույթի օրեր, Հայկական հարցերի ինստիտուտ:

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայ-գերմանական համագործակցությունը մշակույթի, կրթության և գիտության ոլորտներում 1992-2008թթ. ընթացքով բավականին ուշագրավ հետազոտված թերևս առաջ անցնելով երկկողմ քաղաքական ու տնտեսական համագործակցության տեմպերից: Սույն հետազոտության մեջ ներկայացվում են քննության առարկա ժամանակահատվածում երկու երկրների միջև վերոնշյալ ոլորտներում կապերի հաստատման, ամրապնդման ու զարգացման առանձնահատկությունները: Անկախացումից հետո Հայաստանի իշխանություններն իրենց ուշադրության առանցքում ներառեցին Գերմանիայի մշակութային և կրթական քաղաքականության հիմնական նպատակները, որոնցից են՝ ներկայացնել երկիրը որպես միջազգային մշակութային բեմահարթակ, ամրապնդել և ավելի ազդեցիկ դարձնել այն որպես կրթական կենտրոն, ապահովել գերմաներեն լեզվի տարածումն ամբողջ աշխարհում և այլն: Գործընկեր երկրի մշակութային և գիտակրթական առաջնահերթությունների իմացությունը հնարավորություն տվեց հայկական կողմին ճիշտ դիրքավորվելու և բարեհաջող ու ակտիվ գիտամշակութային համագործակցություն ծավալելու ու զարգացնելու: Այդ համագործակցությունն առարկայական դարձավ շնորհիվ միջպետական մի շարք համաձայնագրերի, հուշագրերի: Մշակութային կապերի զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն երկու երկրներում փոխադարձաբար տվյալ երկրի մշակութային օրերի կազմակերպումը: Գիտության և կրթության ոլորտում համագործակցության շրջանակներում փոխանակման ծրագրեր են իրականացվում նաև առանձին բուհերի միջև:

## ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳՂՃ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍ

Մշակութային և կրթական քաղաքականությունը Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին քաղաքականության երեք հիմնական բաղադրիչներից մեկն է՝ արտաքին քաղաքականության և արտաքին տնտեսական քաղաքականության հետ մեկտեղ: Մշակութային և կրթական լայն հնարավորությունները հասանելի են Գերմանիայի գործընկեր երկրների քաղաքացիների համար, ինչն անմիջականորեն ամուր հիմքեր է ստեղծում կայուն միջազգային հարաբերությունների համար: Միաժամանակ վստահություն է ստեղծվում Գերմանիայի, նրա հասարակության, տնտեսության և քաղաքականության հանդեպ, ինչի արդյունքում ձեռք են բերվում կարևոր և հուսալի գործընկերներ: Գերմանիայի մշակութային և կրթական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ներկայացնել երկիրը որպես միջազգային մշակութային բեմահարթակ, ամրապնդել և ավելի ազդեցիկ դարձնել այն որպես կրթական կենտրոն, ապահովել գերմաներեն լեզվի տարածումն ամբողջ աշխարհում, մեծացնել Գերմանիայի ներդրումը համաշխարհային ճգնաժամերի և կոնֆլիկտների հաղթահարման գործում, աջակցել եվրոպական ինտեգրացիոն գործընթացներին, խրախուսել մշակութային բազմազանությունը, կայուն երաշխիքներ ստեղծել միջազգային հարաբերությունների համար մարդկանց միջև երկխոսությամբ: Մշակութային և կրթական քաղաքականությունը մասամբ իրականացնում են Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը և մի շարք կազմակերպություններ ու մարմիններ, որոնցից հիմնականներն են «Գյոթե ինստիտուտը» (Goethe Institut), Գերմանական ակադեմիական ծրագրերի փոխանակման գրասենյակը (DAAD), Ալեքսանդր ֆոն Հումբոլդտի հիմնադրամը (Alexander von Humboldt Stiftung), Արտասահմանյան երկրների հետ հարաբերությունների ինստիտուտը (Institut für Auslandsbeziehungen), Արտասահմանյան դպրոցների հարցերով զբաղվող կենտրոնը (ZFA) և այլն<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայք, [www.auswaertiges-amt.dediplodeAussenpolitikKulturDialogZieleUndPartnerZielePartner.html](http://www.auswaertiges-amt.dediplodeAussenpolitikKulturDialogZieleUndPartnerZielePartner.html), հասանելի՝ 10.15.2008:

## ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

1992թ. հայ-գերմանական հարաբերությունների հաստատմամբ երկու երկրների միջև սկզբնավորվեցին նաև համագործակցության տարրեր մշակույթի, գիտության և կրթության բնագավառներում:

Հատկանշական է, որ գերմանացիները Հայաստանի հիմնական արժեքներից մեկը նրա հնագույն մշակույթն են համարում, ուստի այն երկկողմ հարաբերություններում մեծ նշանակություն ունի: Հայաստանում Գերմանիայի կրթական և մշակութային քաղաքականության հիմնական նպատակն է գերմաներենը, որպես օտար լեզու, խթանել ոչ միայն դպրոցներում, այլև բարձրագույն ուսումնական հաստատություններում: Բացի այդ, պետք է տարբեր միջոցառումներով ներկայացնել ժամանակակից Գերմանիայի իրական պատկերը և ակտիվացնել երկու երկրների մշակութային գործիչների միջև շփումները<sup>1</sup>:

1995թ. դեկտեմբերին կայացավ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարար Քլաուս Քինքելի այցը Հայաստան<sup>2</sup>: Քինքելն ունեցավ մի շարք հանդիպումներ Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների հետ: 1995թ. դեկտեմբերի 21-ին այցն ամփոփվեց մամուլի ասուլիսով և երեք միջակառավարական համաձայնագրերի կնքմամբ, որոնց շարքում էր երկու երկրների կառավարությունների միջև մշակութային համագործակցության մասին<sup>3</sup> համաձայնագիրը: Այն հիմք հանդիսացավ հայ-գերմանական մշակութային համագործակցություն համար:

1998թ. պաշտոնական այցով Գերմանիա մեկնեց ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, որի այցի հիմնական առանցքը գերմանական մեծաքանակ ձեռագրերը վերադարձնելու հարցն էր: Դրանք Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին անցել էին Խորհրդային Միության տիրապետության տակ: Մայիսի 3-ին ԳԴՀ արտաքին գործերի նախարարության «Աշխարհի դահլիճ» սրահում բազմաթիվ պաշտոնյաների, լրագրողների և հյուրերի ներկայությամբ տեղի ունեցավ 575 ձեռագրերի պաշտոնական հանձնման արարողությունը, որը մեծ արձագանք

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, <http://www.auswaertigesamt.de/diplo/de/Laenderinformationen/Armenien/Bilateral.html#t3>, հասանելի՝ 10.11.2009:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22.06.2004:

<sup>3</sup> Տե՛ս Համաձայնագիր ՀՀ կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև մշակութային համագործակցության մասին: Ստորագրվել է Երևանում՝ 21.12.1995, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/de>:

գտավ Գերմանիայում: Գերմանացիները կարծում էին, որ Ռուսաստանը դեմ կլիներ ձեռագրերի հանձնմանը, քանի որ պատերազմից հետո ԽՍՀՄ տեղափոխած ձեռագրերը համարում էր իր սեփականությունը, բայց այս քայլն ավելի շատ բարի կամքի դրսևորում էր<sup>1</sup>:

Հայ-գերմանական հարաբերություններում 1998թ. Գերմանիային մշակութային արժեքների հանձնումը քաղաքական նշանակությունից բացի, մշակութային համագործակցության ակնառու դրսևորում է: Բհարկե, ի պատասխան հայկական կողմի բարի կամքի դրսևորման, 1999թ. մարտին ԳԴՀ քաղաքական արխիվում պահվող և Ստամբուլում Գերմանիայի դեսպանատան 1989-1923թթ. ընդգրկող ժամանակահատվածի արխիվային փաստաթղթերի և վավերաթղթերի լուսապատճենները հանձնեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանին:

1998թ. սեպտեմբերին «Բոննի ամառ» միջոցառման շրջանակներում տեղի ունեցան Հայաստանի մշակույթի օրերը: Հայկական մշակույթն ու արվեստը մեծ հաջողությամբ ներկայացվեցին Բոնն, Բիլեֆելդ, Մագդեբուրգ և Հալլե-Վիթթենբերգ քաղաքներում: Հայաստանի մշակութային օրերի շրջանակներում երկու երկրների գիտության, կրթության և մշակութային գործիչների միջև համագործակցությունն ամրապնդող իրադարձություն էր Հալլե-Վիթթենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանի «Լոյկորեա» հիմնադրամին կից «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի բացումը՝ պրոֆ. Հերման Գոլցի ղեկավարությամբ<sup>2</sup>:

Մշակութային գործակցության համար կարևոր հիմք են նաև երկկողմ պատվիրակներից բաղկացած մշակութային հանձնաժողովների միջև 1996թ. օգոստոսի 20-22-ը Մագդեբուրգում առաջին և 2001թ. նոյեմբերի 19-23-ը Երևանում անցկացված «Մշակութային համագործակցության հարցերով հայ-գերմանական համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստերը: Երկրորդ նիստի ավարտին ստորագրվեց արձանագրություն, որով հստակեցվում էին հետագա տարիներին համագործակցության ուղղությունները մշակույթի, կրթության և գիտության ոլորտներում, իսկ արդեն 2003թ. հունիսին Հայաստանում էր Բոնն քաղաքի միջազգային հարաբերությունների վարչության պետի տեղակալ Հայնրիխ Մաուսը, ով Հայաստան էր ժամանել քննարկելու նոյեմբերին Հայաստանում ստորագրված արձանագրության շրջանակում առաջիկա համագործակցության խնդիրները<sup>3</sup>:

<sup>1</sup> St' u Wir wollen guten Willen zeigen, Rheinische Post, 07.05.1998.

<sup>2</sup> St' u ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժնի (ՊԴԲ) արխիվ գ. 19, ց. 7, էջ 13:

<sup>3</sup> St' u նույն տեղը:

Մաքսոնիա-Անհալթը՝ Հայաստանի հետ համագործակցող դաշնային այդ հողը, նույնպես ակտիվ է մշակութային և կրթական ասպարեզում: 1998թ. Մաքսոնիա-Անհալթի և Հայաստանի միջև ստորագրվել է հուշագիր, որը որոշակի բնագավառներում համագործակցության պայմանավորվածություն է, մասնավորապես՝ բարձրագույն կրթություն, ուսուցիչների վերապատրաստում, դպրոցների միջև համագործակցություններ և մշակույթի բնագավառում փորձի փոխանակում: Հուշագրի շրջանակներում անցկացված խորհրդաժողովները, ցուցահանդեսները և այլ միջոցառումները նպաստել են գերմանա-հայկական մշակութային և գիտական կապերի ընդլայնմանը, իսկ ապագա համագործակցության համար արդեն իսկ համաձայնեցված ծրագրերը նոր ասպարեզներ են բացում առավել ինտենսիվ փոխհամագործակցության համար: 2005թ. սեպտեմբերի 2-7-ը, Մաքսոնիա-Անհալթ երկրամասի մշակութային օրերի շրջանակներում, Հայաստանում էր ԳԴՀ Մաքսոնիա-Անհալթ երկրամասի մշակույթի նախարար Յան-Հենդրիկ Օլբերտցի գլխավորած պատվիրակությունը: Որպես համագործակցության արդյունավետ շարունակություն՝ 2005թ. սեպտեմբերի 3-ին Հայաստանի մշակույթի նախարարությունում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Մաքսոնիա-Անհալթի երկրամասի կառավարության միջև գիտության, կրթության բնագավառներում համագործակցության մասին համատեղ հայտարարություն»<sup>1</sup>:

Մշակութային համագործակցության իրավական հիմքը կազմող այդ փաստաթղթերն իրենց բովանդակությամբ հաջողությամբ իրականացվում են, թե՛ միջպետական և թե՛ Մաքսոնիա-Անհալթ երկրամասի մակարդակներով: Մեր ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս փաստելու, որ մշակույթի բնագավառում Մաքսոնիա-Անհալթ երկրամասի հետ համագործակցությունը կայացած է և զարգացման միտում ունի: Ներկայացնելով հայ-գերմանական հարաբերությունների համատեքստում մշակութային համագործակցությունը՝ անհրաժեշտ է նշել, որ Գերմանիան դաշնային հանրապետություն է, ուստի և հայ-գերմանական համագործակցությունը պետք է ընդլայնել՝ ներառելով Գերմանիայի բոլոր 16 հողերը (երկրամասերը)<sup>2</sup>: Նման համագործակցությունը հնարավորություն կտա ընդլայնելու փոխգործակցության ոլորտները և հորիզոն-

---

<sup>1</sup> Տե՛ս Հայ-գերմանական մշակութային համագործակցության մասին տեղեկանք, ՀՀ մշակույթի նախարարություն, միջազգային կապերի բաժին, 11.12.2009, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/de>:

<sup>2</sup> Խոսքը վերաբերում է ոչ միայն մշակութային համագործակցությանը, այլև համագործակցության տարբեր ոլորտներին:

ները՝ արդյունքում ունենալով բազմակողմ փոխգործակցություն հայ-գերմանական համագործակցության շրջանակներում:

Անդրադառնալով Գերմանիայի հայկական գիտական կենտրոններին՝ հարկ է նշել, որ նմանօրինակ առաջին հաստատությունը ստեղծվել էր դեռևս 1969թ.՝ Ուայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպությունը՝ (Research on Armenian Architecture Organization)՝ Արմեն Հախնազարյանի ղեկավարությամբ: Կազմակերպությունը Հայաստանում պաշտոնապես գրանցվեց 1998թ.<sup>1</sup>: 1995թ. Բոխում քաղաքի Ռուևր համալսարանում բացվեց Սփյուռքի և ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտը (Institut für Diaspora - und Genozid Forschung): Այն ղեկավարում է պրոֆ. Միհրան Դաբադը<sup>2</sup>: 1977թ.-ից գործում է Հայկական հարցերի ինստիտուտը (Institut für Armenische Fragen e. V.), որի տնօրենը 2004թ.-ից Ալիս Մարուքյանն է: Կազմակերպությունը հենց սկզբից իր գործունեության հիմքում դրեց «Հայկական հարցը»: Հետագայում այն իրականացնում էր երկու հիմնական առաքելություն՝ հավաքել Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով փաստաթղթեր և Հայաստանն ու հայերին ավելի ճանաչելի դարձնել գերմանացիներին<sup>3</sup>: Հայ-գերմանական հարաբերությունների ամրապնդման գործում մեծ է նաև Թեաա Հոֆմանի ավանդը, որի բազում հրապարակումները Հայոց ցեղասպանության վերաբերյալ հնարավորություն են տալիս գերմանացիներին մայրենի լեզվով ծանոթանալու դեպքերին և իրադարձություններին: 1984թ.-ից Բեռլինում գործում է «Հայաստան տեղեկատվական և փաստաթղթերի կենտրոնը» (“Informations - und Dokumentationszentrum Armenien”): Կենտրոնը գլխավորում են Թեաա Հոֆմանը և Ժիրայր Քոչարյանը: Այս կենտրոնը տրամադրում է բավականին արժեքավոր փաստաթղթեր Հայոց ցեղասպանության վերաբերյալ<sup>4</sup>: Հայոց լեզվի զարգացման և ավելի լայն լսարաններին հասանելի դառնալու առումով մեծ ու անգնահատելի էր Բեռլինի ազատ համալսարանում (Freie Universität Berlin) հայագիտության դասավանդումը, որն իրականացնում էր Ժիրայր Քոչարյանը<sup>5</sup>: Նմանօրինակ կենտրոնների գոյությունը ոչ միայն հայագիտության պահպանութ-

<sup>1</sup> Տե՛ս **Petrosian H.**, Armenische inschriften, Armenisch-Deutsche Korrespondenz. Nr. 101. Jg. 1998, Heft 3, S. 24:

<sup>2</sup> Տե՛ս **Ordukhanyan A.**, Armenier in deutschland, Geschichte und Gegenwart, Vortrag am 19. April 2008 in Erfurt, herausgeber: Der Ausländerbeauftragte beim Thüringer Ministerium für Soziales, Familie und Gesundheit, S. 60.

<sup>3</sup> Տե՛ս Vor 20 Jahre gegründet. Deutsch-armenische Korrespondenz, Nr. 98, Jg. 1997, Heft 4, S. 26.

<sup>4</sup> Տե՛ս **Ordukhanyan A.**, նշվ. աշխ.:

<sup>5</sup> Տե՛ս [www.geisteswissenschaften.fuberlin.de/we02/indogerman/mitarbeiter2/mit/koutcharian1/index.html](http://www.geisteswissenschaften.fuberlin.de/we02/indogerman/mitarbeiter2/mit/koutcharian1/index.html), հասանելի՝ 20.08.2010:

յան գործում մեծ նշանակություն ունի, այլև օտարներին Հայաստանն ավելի ճանաչելի դարձնելու մի յուրահատուկ միջոց է:

Միջմշակութային համագործակցության ակտիվացման համար կարևոր են մշակութային միջոցառումները: Նմանօրինակ մի միջոցառում՝ «Հայաստան-2000» գիտաժողովը, անցկացվեց 2000թ. սեպտեմբերի 2-8-ը «Մեսրոպ» հայագիտական կենտրոնի նախաձեռնությամբ. այն նվիրված էր Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակին»: Գիտաժողովի նշանակության ու կարևորության մասին էր վկայում այն, որ պատվավոր հովանավորությունը ստանձնել էին երկու երկրների նախագահներ Յոհանես Ռաուն և Ռոբերտ Քոչարյանը: Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ Գերմանիայում կազմակերպվեցին մշակութային բազմաթիվ միջոցառումներ, մասնավորապես, 2001թ. հունիսի 20-ին Բեռլինի Մայր տաճարում անցկացվեց կենտրոնական արարողությունը, որին մասնակցեցին շուրջ 800 հյուրեր<sup>1</sup>: Այս միջոցառումներն իրենց ավանդը բերեցին երկկողմ մշակութային համագործակցությունը խորացնելու գործին՝ ևս մեկ անգամ ամրապնդելով Գերմանիայում Հայաստանի՝ աշխարհում առաջին քրիստոնյա պետությունը լինելու ընկալումը: 2001թ. նոյեմբերի 23-ին՝ հայ-գերմանական մշակութային համագործակցության հարցերով համատեղ հանձնաժողովի ավարտին, Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց «Լյութերի ժամանակի գանձերը. Վերածննդի շրջանի գոհարներ» խորագրով ցուցահանդես, որտեղ ցուցադրված էին Հալլեի պետական թանգարանի և Լյութերի հիմնադրամի կողմից տրամադրված ցուցանմուշներ<sup>2</sup>:

2002թ. մայիսի 14-ին Բեռլինի Մայր տաճարում տեղի ունեցավ ֆրանսահայ Ժան-Միշել Թիերիի «Հայաստանը միջնադարում գրքի գերմաներեն տարբերակի շնորհանդեսը: Գիրքը թարգմանել էր Հալլե-Վիթթենբերգի Մարտին Լյութերի համալսարանի պրոֆեսոր Հերման Գուլը: 2002 թվականի հունիսի 2-ին Հեսսեն և Լորշ քաղաքներում տեղի ունեցան հանդիսություններ. Լորշի վանքի և Գեղարդավանքի միջև համագործակցության պայմանագիր ստորագրվեց: Սա նոր քայլ էր երկու երկրների մշակութային համագործակցության ոլորտում: Երկուսն էլ UNESCO-ի ժառանգության

<sup>1</sup> Տե՛ս Տեղեկանք հայ-գերմանական երկկողմ հարաբերությունների վերաբերյալ 2004թ., ԱԳՆ, Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների առաջին բաժնի ընթացիկ արխիվ, 2005թ., <https://www.mfa.am/hy/structure/41>:

<sup>2</sup> Հուշագիր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության երկկողմ հարաբերությունների վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ Եվրոպայի վարչություն, Երևան, հոկտեմբեր 2008, էջ 18, <https://www.mfa.am/hy/press-releases/2021/02/18/arm-de/10798>:

համաշխարհային մշակութային գանձերի ցանկում են: Հանդիսությունը ֆինանսավորվել էր գերմանական «Դոյչե բանկի» և ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Մասնակցում էին Բունդեսթագի և Հեսսենի Լանդթագի պատգամավորներ, երկրամասի կառավարության անդամներ, ինչպես նաև ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը: Միջոցառման շրջանակներում ելույթ ունեցավ Գեղարդի վանքի երգչախումբը: 2002 թվականի հունիսի 20-ին Բեռլինում՝ Բրանդենբուրգյան դարպասներից ոչ հեռու, բացվեց կավե արջերի (քաղաքի խորհրդանիշ) ցուցահանդեսը՝ «Եկեք ճանաչենք միմյանց, հանդուրժողական և հաղորդակից լինենք իրար հանդեպ» խորագրով: Կոչն ուղղված էր Գերմանիայում հավատարմագրված մոտ 200 դեսպանություններին, որոնցից 125-ը ներկայացրել էին արջեր՝ իրենց երկրին բնորոշ մշակութային և պատմական յուրահատուկ նկարագրություններով: Հայաստանը ներկայացնում էր Երևանի գեղարվեստի ակադեմիայի ուսանող Արմեն Վանեցյանը, որը «Արվեստի բարեկամներ» միության հրավերով ուսանում էր Բեռլինի Ազատ համալսարանում: Վանեցյանին հովանավորում էր Կարստեն Օստրովիչը: Երիտասարդ նկարիչը կարճ ժամանակում բարձր մակարդակով ներայացրեց հայկական արվեստը: Ցուցահանդեսը տևել է մինչև 2002 թվականի նոյեմբեր ամիսը, ապա արջերն աճուրդի են հանվել առաջացած գումարը տրամադրվել է UNICEF-ին<sup>1</sup>:

Մշակութային կապերի զարգացման տեսանկյունից առանձնակի նշանակություն ունեն երկու երկրներում մշակութային օրերի կազմակերպումը, հատկապես լայն արձագանք գտան 2003թ. Գերմանիայի Ռոստոկ քաղաքում Հայաստանի մշակույթի օրերի, 2004թ. սեպտեմբերի 21-ից նոյեմբերի 14-ը Սաքսոնիա-Անհալթ երկրամասում Հայաստանի մշակույթի օրերի<sup>2</sup>, 2005թ. սեպտեմբերի 3-7-ը Հայաստանում Սաքսոնիա-Անհալթի մշակույթի օրերի անցկացումը: Մշակույթի օրերի շրջանակներում կազմակերպվել էին համերգներ, կինոցուցադրումներ, զեկույցներ հայկական մշակույթի վերաբերյալ, իսկ 2007թ. դեկտեմբերի 11-18-ը ՀՀ մշակույթի նախարարությունն ու Հայաստանի ազգային պատկերասրահը ՀՀ-ում ԳԴՀ դեսպանության հետ համատեղ անցկացրին Գերմանայի մշակութային օրերը Հայաստանում<sup>3</sup>: Նման միջոցառումները կարևոր են, քանի որ հնարավորություն են տալիս հայ և գերմանացի ժողովուրդներին ծանոթանալու երկու երկրների մշակութային ժառանգությանն ու ավանդույթներին:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊԴԲ արխիվ, գործ 28, ցուցակ 8:

<sup>2</sup> Տե՛ս <http://www.armenien-sachsen-anhalt.de/>, հասանելի՝ 20.11.2009:

<sup>3</sup> Տե՛ս Հուշագիր ՀՀ և ԳԴՀ երկկողմ հարաբերությունների վերաբերյալ...:

2003թ. մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումներ անցկացվեցին Գերմանիայի տարբեր մշակութային օջախներում՝ ԳՂՀ-ում ՀՀ դեսպանության հետ համատեղ:

Չնայած «Գյոթե ինստիտուտը» մասնաճյուղ չունի Հայաստանում, բայց 2008-ից Հայաստանում է նրա ներկայացուցիչը: 1997թ. «Գյոթե ինստիտուտի» և Երևանի Խնկո-Ապոռ անվան մանկական գրադարանի միջև կնքվեց համագործակցության պայմանագիր: Գերմանախոս ընթերցասերներին Երևանում տրամադրվեց «Գերմանական ընթերցասրահ» անվանումով տեղեկատվական գրականության ֆոնդ, որն իրագործեց «Գյոթե ինստիտուտը» Գերմանիայի դաշնային կառավարության՝ Միջին, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի երկրների գրքապահովման օգնության ծրագրի շրջանակներում, որի նպատակն է Գերմանիայի մշակույթի, հասարակության, քաղաքականության, տնտեսագիտության, իրավունքի և պատմության մասին թարմ տեղեկատվություն տրամադրել բնակչությանը: Գրադարանում կան շուրջ 5000 տեղեկատվական աղբյուրներ, 16 անուն բաժանորդագրված ամսագրեր, թերթեր, ինչպես նաև աուդիո և վիդեո նյութեր, ֆիլմեր ու երաժշտություն<sup>1</sup>:

2004թ. իրականացվեց թանգարանային և գրադարանային ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրեր, որի շրջանակներում հայ մասնագետներն իրենց փորձը հարստացրին Գերմանիայում: Խոսելով գրականության ոլորտում համագործակցության մասին՝ հիշատակման արժանի է 2006թ. Հայաստանի գրողների միությունում գրող Բ. Քանդյանի «Ահա հեռու Եվրոպան» գերմանալեզու գրքի շնորհանդեսը: Հատկանշական է այն փաստը, որ Հայաստանը մասնակցում է ամեն տարի Մայնի Ֆրանկֆուրտում կազմակերպվող գրքի միջազգային տոնավաճառին<sup>2</sup>: Մաևս մի միջոց է գերմանացի ընթերցողներին ներկայացնելու հայկական գրականությունը: ՀՀ և ԳՂՀ կառավարությունների միջև մշակութային համագործակցության մասին Երևանում կնքված համաձայնագրի հիմքով 2005թ. ստորագրված հուշագրի շրջանակներում 2006 թվականից գործում է ՀՀ 4 դպրոցների և ԳՂՀ Սաքսոնիա-Անհալթ երկրամասի 4 դպրոցների միջև աշակերտների փոխանակման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Հայաստանի դպրոցների ուսուցիչներ, իսկ արդեն 2006թ. և 2007թ. հայ դպրոցականները հյուրընկալվել են Գերմանիայում:

---

<sup>\*</sup> 2017թ. դեկտեմբերին Երևանում բացվեց «Գյոթե կենտրոնը»՝ «Գյոթե ինստիտուտի» գործընկերը:

<sup>1</sup> Տե՛ս [www.natchildlib.org/view-site-2-lang-arm-page-39.html](http://www.natchildlib.org/view-site-2-lang-arm-page-39.html), հասանելի՝ 02.09.2010:

<sup>2</sup> Տե՛ս Հայ-գերմանական մշակութային համագործակցության մասին տեղեկանք, ՀՀ մշակույթի նախարարություն, միջազգային կապերի բաժին, 11.12.2009:

Փոխադարձության սկզբունքով 2008թ. գերմանական 4 դպրոցներից ուսուցիչներ և աշակերտներ են հյուրընկալվել Հայաստանում: Մաքսոնիա-Անհալթի հետ համագործակցության շրջանակներում երկրամասի կրթության և գիտության նախարար Հ. Օլբերտցի հրավերով 2006թ. նոյեմբերին Գերմանիա այցելեց ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվիրակությունը՝ նախարար Լևոն Մկրտչյանի գլխավորությամբ: Այցի ընթացքում ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ, որոնք հետագայում ևս կնպաստեն Հայաստան-Մաքսոնիա-Անհալթ կապերի զարգացմանը: 2007թ. դեկտեմբերի 11-13-ը Մաքսոնիա-Անհալթում էր ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի գլխավորած պատվիրակությունը, իսկ արդեն 2008թ. հունիսի 15-20-ը Հայաստան այցելեց Մաքսոնիա-Անհալթ երկրամասի կրթության և մշակույթի նախարար Յան-Շենդրիկ Օլբերտցի գլխավորած պատվիրակությունը: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց կրթամշակութային բնագավառում համագործակցությունը շարունակելու, ինչպես նաև հնագիտության բնագավառում համագործակցություն սկսելու վերաբերյալ<sup>1</sup>:

Գիտության և կրթության ոլորտում Հայաստանի և Գերմանիայի միջև համագործակցությունն ընթանում է բավականին բարեհաջող, որի շրջանակներում համագործակցություն է իրականացվում նաև առանձին բուհերի միջև: Ստորև ներկայացնում ենք ԳԴՀ և ՀՀ համագործակցող համալսարանների ցանկը. Երևանի պետական համալսարանի հետ համագործակցում են Բեռլինի Բոյթ տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատությունը, Շմալկալդենի քոլեջը, Հանովերի Գոթֆրիդ Վիլհելմ Լայբնից, Բրաունշվայգի Կարոլո-Վիլհելմինա տեխնիկական, Մանհայմի, Ռոստոկի և Թրիերի համալսարանները: Ճարտարապետության և *շինարարության* Հայաստանի ազգային *համալսարանը* համագործակցում է Կայզերսլաուտերնի տեխնիկական համալսարանի և Բեռլինի Բոյթ տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատության հետ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը՝ Վայներստեֆան-Տրիսդորֆի կիրառական գիտությունների քոլեջի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը՝ Դրեզդենի, Իլմենաուի տեխնիկական և Զիեզենի համալսարանների հետ: Բեռլինի Հումբոլտի համալսարանի հետ համագործակցում է Երևանի հանրային առողջության գիտահետազոտական ինստիտուտը, իսկ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը գործակցում է Հալլե-Վիթենբերգի Մարտին-Լյութերի համալսարանի հետ, Հայաստանի ֆրանսիական համալսարանը՝ Բեռլինի տեխնիկական համալ-

<sup>1</sup> Հուշագիր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության երկկողմ հարաբերությունների վերաբերյալ...

սարանի հետ<sup>1</sup>: Փոխհամագործակցության այս պայմանավորվածությունները դեռևս իրականացվում են մասամբ և հեռու են ակտիվ շփումների վառ օրինակներ համարվելուց: Փոխարենը՝ արդյունավետ է գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (ԳԱՓԾ - DAAD) գործունեությունը, որը հայ ուսանողներին գիտության տարբեր ոլորտներում ուսումը շարունակելու և գիտնականներին փոխանակման տարբեր ծրագրերի մասնակցելու լայն հնարավորություններ է ընձեռում: Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայությունը գերմանական բուհերի ընդհանուր հաստատություն է, որն աշխարհում միջազգային ակադեմիական փոխանակմանն աջակցող ամենամեծ կազմակերպությունն է: Դեռևս 1996թ.-ից ԳԱՓԾ գրասենյակը Հայաստանում ուներ ներկայացուցիչ, իսկ ԳԱՓԾ տեղեկատվական գրասենյակը Երևանում բացվել է 2004-ին, որտեղ մատչելի տեղեկատվություն է տրամադրվում Գերմանիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների մասին, ինչպես նաև խորհրդատվություն է տրամադրվում բուհերի համագործակցության մասին: Հայաստանում ԳԱՓԾ գրասենյակն ամեն տարի տրամադրում է շուրջ 50 անհատական կրթաթոշակ հայ ուսանողներին, ասպիրանտներին, գիտնականներին և համալսարանների վարչական աշխատակիցներին: 1992թ.-ից մինչ օրս ԳԱՓԾ-ն կրթաթոշակներ է տրամադրել շուրջ 1000 հայ ուսանողի: 2004թ.-ից գործում է «Գերմանախոս երկրների հայ շրջանավարտների միությունը»<sup>2</sup>: Նման համագործակցությունը նոր հնարավորություններ է ստեղծում հայ ուսումնասիրողների համար գիտության տարբեր ոլորտներում մասնագիտանալու գերմանական առաջավոր բուհերում՝ այդ փորձառությունն օգտագործելով սեփական երկրի զարգացման համար, թեև փորձը ցույց է տալիս, որ կրթություն ստացողների գերակշիռ մասը շարունակում է մնալ եվրոպական տարբեր երկրներում, ուստի անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմ, որպեսզի հայ ուսանողները կարողանան այդ փորձը ներդնել Հայաստանում: Բացի ԳԱՓԾ-ի կողմից տրամադրվող կրթաթոշակներից, հայ ուսանողներին կրթաթոշակ ստանալու հնարավորություն են տալիս գերմանական հիմնադրամները՝ «Ալեքսանդր ֆոն Հումբոլդտ», «Ռոբերտ Բոշ», «Կոնրադ Ադենաուեր», «Հայնրիխ Բյոլ», «Ֆրիդրիխ Էբերտ», «Ֆրիդրիխ Նուման» և այլն: 2008թ.-ից հայկական բուհերի շրջանավարտները կարող են դիմել նաև ԳԴՀ Բունդեսթագի միջազգային պառլամենտական կրթաթոշակ ծրագրին:

<sup>1</sup> Տե՛ս [www.hs-kompass2.de/kompass/xml/index\\_koop.htm](http://www.hs-kompass2.de/kompass/xml/index_koop.htm), հասանելի՝ 10.10.2010:

<sup>2</sup> Տե՛ս Գերմանական ակադեմիական ծրագրերի փոխանակման հայաստանյան գրասենյակի պաշտոնական կայք, <http://daad.am/arm.html>, հասանելի՝ 05.06.2009:

Անփոփելով հայ գերմանական համագործակցությունը մշակույթի, կրթության և գիտության ոլորտներում 1992-2008թթ. պետք է փաստել, որ այստեղ բարեհաջող և ակտիվ համագործակցություն էր իրականացվում, որը հնարավորություն տվեց երկուստեք ծանոթանալու մշակութային նորանոր արժեքների, լայն հեռանկարներ բացեց գիտական նոր աշխատանքների իրականացման և կրթության զարգացման համար:

**Мартин Товмасян, Армяно-Германское сотрудничество в сфере культуры, образования и науки в 1992–2008ГГ.** - Армяно-германское сотрудничество в сфере культуры, образования и науки в 1992–2008гг. шло по весьма примечательной траектории, несколько опережая по темпам двустороннее политическое и экономическое сотрудничество. В данном исследовании представлены особенности установления, укрепления и развития связей между двумя странами в вышеуказанных сферах в рассматриваемый период. После обретения независимости власти Армении сосредоточили внимание на главных целях германской культурно-образовательной политики, которые заключаются в том, чтобы представить страну как международную культурную арену, укрепить ее, сделать более влиятельной как образовательный центр, обеспечить распространение Немецкий язык во всем мире и так далее. Знание культурных и научно-образовательных приоритетов страны-партнера позволило армянской стороне правильно позиционировать себя, развивать успешное и активное научно-культурное сотрудничество. Это сотрудничество стало ощутимым благодаря ряду межгосударственных соглашений и меморандумов. С точки зрения развития культурных связей большое значение имеет организация совместных дней культуры в двух странах. В рамках сотрудничества в области науки и образования также реализуются программы обмена между отдельными вузами.

**Martin Tovmasyan, The Armenian-German cooperation in the spheres of culture, education and science in 1992-2008** - The Armenian-German cooperation in the spheres of culture, education and science in 1992-2008 proceeded with a rather remarkable trajectory, slightly surpassing the pace of bilateral political and economic cooperation. This study presents the peculiarities of establishing, strengthening and developing ties between the two countries in the above-mentioned areas during the period under review. After independence, the Armenian authorities focused on the main goals of German cultural and educational policy, which are to present the country as an international cultural arena, to strengthen it, to make it more influential as an educational center, to ensure the spread of the German language throughout the world, and so on.

Knowledge of the cultural and scientific-educational priorities of the partner country enabled the Armenian side to position itself correctly, to develop successful and active scientific-cultural cooperation. That cooperation became tangible due to a number of interstate agreements and memoranda. From the point of view of the development of cultural ties, the organization of mutual cultural days in the two countries is of great importance. Within the framework of cooperation in the field of science and education, exchange programs are also implemented between separate universities.

Ուղարկվել է խմբագրություն 25.04.2022թ.

Գրախոսվել է 27.04.2022թ.

Ստորագրվել է տպագրության 27.04.2022 թ.